ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-309-08.10.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1658 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-309-08.10.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

1. Նախագծով առաջարկվում է միևնույն հոդվածով նախատեսել անուղղակի դիտավորությամբ և անզգուշությամբ կատարվող հանցագործություններ:

Հարկ է նշել, որ առաջարկվող 360.1-րդ հոդվածի 3-րդ մասով որպես պատիժ նախատեսվում է ազատազրկում՝ 7-12 տարի ժամկետով, մինչդեռ անզգույշ հանցագործությունների դեպքում ազատազրկման ձևով պատիժը չի կարող գերազանցել 10 տարին:

Նախագծով առաջարկվող 360.1-րդ հոդվածի խմբագրությունը կարող է իրավակիրառ պրակտիկայում առաջացնել հակասական մեկնաբանություններ, օրինակ՝ այն հարցի կապակցությամբ, թե արդյոք 360.1-րդ հոդվածի 3-րդ մասով որակման ենթակա անզգույշ հանցագործության դեպքում հանցանք կատարած անձն իրավասու է միջնորդել դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը):

Բացի այդ, մեղքի տարբեր ձևերով կատարվող հանցանքների համար միևնույն պատժաչափ նախատեսելը չի բխում Օրենսգրքով սահմանված արդարության սկզբունքից: Հետևաբար, առաջարկում ենք 360.1-րդ հոդվածով առաջարկվող ընդհանուր հանցակազմը դարձնել երկու ինքնուրույն

հանցակազմեր՝ կախված հանցագործությունը կատարելու մեղքի ձևից:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ Նախագծով առաջարկվող կարգավորումների (երբ հանցանքները կատարվել են անզգուշությամբ) և Օրենսգրքի 358-րդ, 358.1-րդ և 359-րդ հոդվածների հարաբերակցության հարցին:

Այսպես, Նախագծի հիմնավորումից բխում է, որ Նախագծի նպատակն է խստացնել զինծառայողին ինքնասպանության հասցնելու համար պատիժը:

Մինչդեռ, Նախագիծը առաջարկվող խմբագրությամբ ընդունելու դեպքում հնարավոր են դեպքեր, երբ տեղի կունենա հակառակը և նման հանցանք կատարած անձինք կենթարկվեն ավելի մեղմ պատժի, քան գործող կարգավորումների դեպքում:

Ներկայումս, պետի (հրամանատարի) նկատմամբ բռնություն կամ բռնության սպառնալիքի գործադրումը, որի հետևանքով անզգուշությամբ առաջանում է ծանր վնաս (պետը ինքնասպան է լինում), ենթակա է որակման Օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում՝ 6-12 տարի ժամկետով:

Նախագծով առաջարկվող կարգավորումների դեպքում, նման արարքն ենթակա կլինի որակման Օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մասով կամ 2-րդ մասով (եթե առկա է ծանրացնող հանգամանքներից առնվազն մեկը), որոնցով որպես պատիժ նախատեսված է ազատազրկում՝ համապատասխանաբար 3-8 և 5-10 տարի ժամկետով:

Նույն խնդրահարույց իրավիճակն առկա է նաև այն դեպքում, երբ արարքը կատարվում է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում: Ներկայումս այդ ծանրացնող հանգամանքի առկայության դեպքում քննարկվող հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ 7-13 տարի ժամկետով, իսկ Նախագծի ընդունման դեպքում 7-10 (անզգույշ հանցանքների համար ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 10 տարին) տարի ժամկետով:

Նույն խնդիրն առկա է նաև ստորադասի նկատմամբ բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելու դեպքում, եթե դա անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ (օրինակ՝ ստորադասը ինքնասպան է լինում):

Այսպես, գործող կարգավորման դեպքում նման հանցանք կատարած անձի

արարքը կորակվի Օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 5-րդ մասով (երբ արարքը կատարվում է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում), և հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ կնշանակվի ազատազրկում՝ համապատասխանաբար 7-12 և 8-13 տարի ժամկետով:

Մինչդեռ, Նախագծի ընդունման դեպքում այդ անձանց արարքը կորակվի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասով (1-ին մասով որակելն անհնար է, քանի որ 2-րդ մասում որպես ծանրացնող հանգամանք է նախատեսվում պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ կատարելը) և 3-րդ մասով և նրանց նկատմամբ պատիժ կնշանակվի ազատազրկում՝ համապատասխանաբար 5-10 և 7-10 տարի ժամկետով (անզգույշ հանցանքների համար ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 10 տարին):

Ամփոփելով վերոշարադրյալը հարկ է նկատել, որ Նախագիծն առաջարկվող խմբագրությամբ ընդունելու դեպքում տեղի կունենա վերոնշյալ հանցանքներ կատարած անձի վիճակի բարելավում: Օրենսգրքում 360.1-րդ հոդված նախատեսելու դեպքում, ղեկավարվելով հատուկ և ընդհանուր նորմերի մրցակցության կանոնով, վերջիններիս արարքները այլևս չեն կարող որակվել Օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ կամ 5-րդ մասերով, 358.1-րդ հոդվածի 4-րդ կամ 5-րդ մասերով այլ պետք է որակվեն 360.1-րդ հոդվածով:

Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է նախատեսել, որ արարքը որակվում է 360.1-րդ հոդվածով, եթե բացակայում են Օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, 358.1-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

Վերոնշյալ խնդիրն առկա է նաև այն դեպքում, երբ արարքը ներկայումս պետք է որակվեր Օրենսգրքի 359-րդ 3-րդ մասով (պատժվում է ազատազրկմամբ՝ 4-8 տարի), իսկ Նախագծի ընդունման դեպքում 360.1-րդ հոդվածի 1-ին մասով (պատժվում է ազատազրկմամբ՝ 3-8 տարի ժամկետով): Այս խնդիրը հնարավոր է լուծել Նախագծով առաջարկվող 360.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատժի նվազագույն շեմը 4 տարի դարձնելու դեպքում:

Միաժամանակ պետք է նշել, որ Նախագծով առաջարկվող հանցակազմի 3-րդ մասով սահմանվող պատիժը ավելի խիստ է (անզգուշությամբ կատարվելու դեպքում պատիժ կարող է նշանակվել 7-10 տարի ժամկետով ազատազրկում), քան

Օրենսգրքի 359-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պատիժը (պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով)։ Հետևաբար, այս մասով Նախագծի կարգավորումներն ընդունելի են։

Ինչ վերաբերում է անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելու հանցակազմին, առաջարկում ենք այն նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 360.2-րդ հոդվածի տեսքով՝ նախատեսելով նույն ծանրացնող հանգամանքները։ Տարբերությունը կայանում է նրանում, որ անուղղակի դիտավորության դեպքում անհրաժեշտ է նախատեսել համեմատաբար խիստ պատիժներ։

2. Նախագծով առաջարկվում է նախատեսել «միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար» կատարելն որպես ծանրացնող հանգամանք։

Պարբերաբար կատարումը բխում է ինքնասպանության հասցնելու հանցավոր արարքի բովանդակությունից, ուստի նպատակահարմար չենք համարում նման ծանրացնող հանգամանքի նախատեսումը։

3. Նախագծով առաջարկվում է, ի թիվս այլոց, որպես հանցագործության կատարման եղանակ դիտարկել *բռնության գործադրումը*։ Այս առումով հայտնում ենք, որ Նախագծով առաջարկվող հանցակազմը հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածում սահմանված հանցակազմի *հարկադրում*, իսկ նշյալ հոդվածը որպես ինքնասպանության հասցնելու եղանակներ նախատեսում է միայն սպառնալիքը, դաժան վերաբերմունքը և անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելը։ Ուստի, ելնելով քրեաիրավական կառուցակարգերի միասնականությունն ապահովելու անհրաժեշտությունից, գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող հանցակազմի դիսպոզիցիայից անհրաժեշտ է հանել *բռնությունը՝ որպես դրա կատարման եղանակ։*

Ամփոփելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 360.1-րդ և 360.2-րդ հոդվածներով հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 360.1 Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը.

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ

ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից, եթե բացակայում են սույն օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, 358.1-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,

3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում,

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից ինը տարի ժամկետով

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

«Հոդված 360.2 Զինծառայողին անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելը.

1. Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից,

2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,

3) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում,

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնչորս տարի ժամկետով»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2019 թվականի N 1658 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-309-08.10.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 11
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-309-08.10.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 360.1. հոդվածով՝
«*Հոդված 360.1. Զինծառայողին ինքնասպանության հասցնելը*
1.Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, բռնության, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
1) մի խումբ անձանց կողմից,
2) պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ,
3) միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար,
4) մարտական հերթապահության կամ մարտական ծառայության կրելու ընթացքում,
պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տաս տարի ժամկետով:
3. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝
պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով:»:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ զինված ուժերում տարիներ շարունակ խաղաղ պայմաններում արձանագրվող ինքնասպանությունների դեպքերը խոսում են ոչ պատշաճ կանոնադրական հարաբերությունների մասին, այսինքն՝ մենք գործ ունենք Զինված ուժերում կարգապահության, կանոնադրական հարաբերությունների հետ կապված լուրջ խնդիրների հետ և այս հարցերը մենք բարձրացնում ենք որպես հանրային պահանջ, Զինված ուժերում զինծառայողին ինքնասպանության հասցնելու հանցագործություն կատարողներին ենթարկելու ավելի խիստ պատժի: Ըստ ՀՀ դատախազության տրամադրած տեղեկատվության՝ ըստ տարեթվերի ՀՀ ԶՈՒ-ում և ԱՀ ՊԲ-ում զինծառայողների ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու դեպքերի առթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված քրեական գործերի վիճակագրության վերաբերյալ ՀՀ ԶՈՒ և ԱՀ ՊԲ-ում ինքնասպանութան կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով մահացությունների թիվը մտահոգիչ է, և դա խոսում է շատ լուրջ իրավիճակի մասին, ընդ որում զինծառայողի կողմից այլ զինծառայողի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելու դեպքերը, կախված նրանց միջև ստորադասության հարաբերությունների առկայությունից կամ բացակայությունից, քրեաիրավական գնահատականի են արժանանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների գլխում նախատեսված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասով, 358.1 հոդվածի 4-րդ մասով կամ 359-րդ հոդվածի 3-րդ մասով:

Հետևաբար գործնականում առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ ինքնասպանության կամ դրա փորձի պատճառ է հանդիսանում զինծառայողի արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելը, որը որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված վերը թվարկված հոդվածների դիսպոզիցիաներում նախատեսված չէ, որի արդյունքում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով, որը նախատեսում է էապես մեղմ պատժաչափ: Նման իրավակիրառ պրակտիկան արդարացի չէ նաև այն առումով, որ արարքի քրեաիրավական որակումից դուրս է մնում հանցագործության առաջնային օբյեկտը՝ զինվորական ծառայության կարգը:

Սույն օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների գլխում սահմանել, որպես ինքնուրույն հանցակազմ՝ հոդված 260.1 զինծառայողին ինքնասպանության հասցնելը, որի մասերում նախատեսված են նշված հանցագործության կատարման հատկանիշները:

Հարկ եմ համարում նաև նշել, որ սույն օրենքի նախագիծը ուղարկվել է ՀՀ դատախազություն՝ նախագծի վերաբերյալ մասնագիտական և

խորհրդատվական կարծիք ստանալու համար, որի ստացված բոլոր նկատառումները և առաջարկությունները ամբողջությամբ ներառվել են նախագծում: